ՀԿԴ/0178/01/22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության
հակակոռուպցիոն դատարան,
Նախագահող դատավոր՝ Վ.Սարգսյան

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ հակակոռուպցիոն դատարան,
Նախագահող դատավոր՝ Կ.Ամիրյան

2024 թվական նոյեմբերի 6-ին քաղաք Երևանում

ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմը (այսուհետ նաև՝ Վճռաբեկ դատարան),

նախագահությամբ՝ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ա.ԿՐԿՅԱՇԱՐՅԱՆԻ
Ռ.ՄԽԻԹԱՐՅԱՆԻ
Ս.ՉԻՉՈՅԱՆԻ
Դ.ՎԵՔԻԼՅԱՆԻ

գրավոր ընթացակարգով քննության առնելով Քերոբ Քյարամյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան)՝ 2024 թվականի ապրիլի 18-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Վարդապետյանի հատուկ վերանայման բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. ՀՀ հակակոռուպցիոն դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ 2024 թվականի մարտի 18-ի որոշմամբ մեղադրյալ Ք.Քյարամյանի պաշտպան Գ. Միքայելյանի միջնորդությունը բավարարվել է, Ք.Քյարամյանի նկատմամբ 2 դրվագ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ նաև՝ ՀՀ նախկին քրեական օրենսգիրք) 38-314-րդ հոդվածի 1-ին մասով (համապատասխանում է ՀՀ քրեական գործող օրենսգրքի 46-445-րդ հոդվածի 1-ին մասին) հարուցված քրեական հետապնդումը դադարեցվել է՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

2. ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության ավագ դատախազ Լ.Ստեփանյանի հատուկ վերանայման բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանն իր՝ 2024 թվականի ապրիլի 18-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի որոշումը թողել է անփոփոխ:

3. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Վարդապետյանը բերել է հատուկ վերանայման բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2024 թվականի մայիսի 23-ի որոշմամբ ընդունվել է վարույթ, և սահմանվել է դատական վարույթի իրականացման գրավոր ընթացակարգ:

<u>Հատուկ վերանայման բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

4. Ըստ բողոքի հեղինակի՝ Վերաքննիչ դատարանի դատական ակտով թույլ է տրվել դատական սխալ՝ նյութական օրենքի խախտում, որն ազդել է վարույթի ելքի վրա:

Միաժամանակ, բողոքում բարձրացված հարցերի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու համար:

4.1 Բողոք բերած անձը Վճռաբեկ դատարանի առջև բարձրացրել է հետևյալ իրավական հարցը. արդյո՞ք պատիժը մեղմացնող նոր օրենքին հետադարձ ուժ տալու

և անձին մեղսագրվող հանցանքը դրան համապատասխանեցնելու դեպքում կիրառելի են վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով անձին քրեական պատասխանատվությունից ազատելու վերաբերյալ նախկին օրենսգրքի դրույթները:

Բողոքաբերը, անդրադառնալով Ք.Քյարամյանի նկատմամբ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 38-314-րդ հոդվածի 1-ին մասով հարուցված քրեական հետապնդումը վաղեմության ժամկետն անցնելու հիմքով դադարեցնելու իրավաչափությանը, նշել է, որ նրան վերագրվող հանցանքներից վերջինն ավարտվել է 2021 թվականի հոկտեմբերի 12-ին: Ենթադրյալ հանցանքը կատարելու պահին նրա արարքը համապատասխանել է ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 38-314-րդ հոդվածի 1-ին մասին, որը միջին ծանրության հանցանք է, որի համար քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը, նույն օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն, 5 տարի է:

2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ նաև՝ ՀՀ գործող քրեական օրենսգիրք) 445-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը ոչ մեծ ծանրության հանցանք է, որի համար քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը նույն օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ նույնպես 5 տարի է:

Այսինքն՝ երկու դեպքում էլ վերը նկարագրված ենթադրյալ պաշտոնեական կեղծիքը կատարելու համար Ք.Քյարամյանին քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը 5 տարի է, որը դեռևս չի անցել (այն լրանալու է 2026 թվականի հոկտեմբերի 12-ին):

Մինչդեռ, ըստ բողոքաբերի՝ Ք.Քյարամյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելիս հիմք է ընդունվել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածով սահմանված՝ ոչ մեծ ծանրության հանցագործության վաղեմության ժամկետի հաշվարկը սահմանող կարգավորումը (2 տարի), որպիսի պայմաններում հաշվի չի առնվել այն հանգամանքը, որ հանցանքի կատարման պահին Ք.Քյարամյանի կատարած արարքը հանդիսացել է ոչ թե ոչ մեծ ծանրության, այլ միջին ծանրության հանցանք, որի վաղեմության ժամկետն արարքի կատարման պահին գործող օրենքով եղել է 5 տարի:

Այլ կերպ՝ Ք.Քյարամյանի վիճակը բարելավող օրենքին (պատժի մեղմացման հիմքով) իրավացիորեն հետադարձ ուժ տալով՝ ստորադաս դատարանները ՀՀ գործող քրեական օրենսգրքի 8-րդ և 9-րդ հոդվածների դրույթների խախտմամբ միաժամանակ կրկին հետադարձ ուժ են տվել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի՝ վաղեմության ժամկետները սահմանող դրույթներին այն դեպքում, երբ արարքի կատարման պահին գործող օրենքով Ք.Քյարամյանի կատարած արարքը հանդիսացել է միջին ծանրության հանցագործություն, որի դեպքում անձին քրեական պատասխանատվությունից ազատելու վաղեմության ժամկետը 5 տարի է:

Վերոգրյալի հաշվառմամբ բողոքաբերն արձանագրել է, որ Ք.Քյարամյանի նկատմամբ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 38-314-րդ հոդվածի 1-ին մասով հարուցված քրեական հետապնդումը վաղեմության ժամկետն անցնելու պատճառաբանությամբ դադարեցնելու մասին դատական ակտն անփոփոխ թողնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի՝ 2024 թվականի ապրիլի 18-ի որոշումն օրինական և հիմնավոր չէ:

5. Վերոշարադրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2024 թվականի ապրիլի 18-ի որոշումը և կայացնել դրան փոխարինող դատական ակտ:

<u>Հատուկ վերանայման բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

6. Մեղադրական եզրակացության համաձայն՝

«(…) Լուսիկ Մնացականյանը 2007 թվականի մայիսի 1-ին կնքված աշխատանքային պայմանագրով աշխատանքի է ընդունվել Արմավիրի մարզի Ալաշկերտ համայնքի «Ալաշկերտի բժշկական ամբուլատորիա» ՓԲ ընկերությունում՝ որպես տնօրեն: Ալաշկերտ համայնքի ավագանու՝ 2014 թվականի հուլիսի 8-ի թիվ 19-Ա որոշմամբ նշված ՓԲԸ-ն վերակազմակերպվել է «Ալաշկերտի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության, իսկ Լուսիկ Մնացականյանը շարունակել է զբաղեցնել տնօրենի պաշտոնը: Համաձայն ՀՈԱԿ-ի կանոնադրության 19-րդ և 20-րդ կետերի՝ Լուսիկ Մնացականյանն իրականացրել է համայնքային կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումը և կրել է

Հայաստանի Հանրապետության օրենսդրության, այլ իրավական ակտերի, համայնքային կազմակերպության կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն, իսկ համաձայն 23-րդ կետի 2-րդ և 7-րդ ենթակետերի՝ օրենսդրությամբ, հիմնադրի, լիազոր մարմնի որոշումներով և կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինել է համայնքային կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, արձակել է հրամաններ, հրահանգներ, տվել է պարտադիր կատարման ցուցումներ և վերահսկել է դրանց կատարումը: Այսինքն՝ Լուսիկ Մնացականյանը հանդիսացել է ՀՈԱԿ-ում մշտապես կազմակերպական-տնօրինչական և վարչատնտեսական գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձ:

Միաժամանակ, ՀՀ առողջապահության նախարարի 2021 թվականի ապրիլի 29-ի թիվ 1562-Ա հրամանի հիմքով՝ իր՝ 09.07.2021թ. թիվ 7 հրամանի համաձայն, Լուսիկ Մնացականյանը հանդիսացել է կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ պատվաստումների իմունոկանխարգելման կաբինետի պատասխանատու:

Դեռևս 1987 թվականից, որպես բուժքույր, «Ալաշկերտի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ում է աշխատում նաև սույն վարույթով մյուս մեղադրյալը՝ Օվսաննա Կարապետյանը, ով Լուսիկ Մնացականյանի հետ գտնվել է ենթակայության հարաբերությունների մեջ:

2020 թվականի փետրվարից Հայաստանի Հանրապետության տարածք ներթափանցած կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածմամբ պայմանավորված՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը և լիազոր պետական մարմինը՝ ՀՀ առողջապահության նախարարությունը, ՀՀ սահմանադրության 86-րդ հոդվածի 7-րդ կետով ստանձնելով բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացման, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծման պարտավորություն, երաշխավորելով բնակչության առողջության և կյանքի անվտանգությունը, անզիջում պայքար է մղել կորոնավիրուսային համավարակի տարածման դեմ՝ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելով դրա վնասակար հետևանքների չեզոքացման ուղղությամբ: Այդ նպատակով ընդունվել են համապատասխան նորմատիվ-իրավական ակտեր, համավարակի դեմ արդյունավետ պայքարելու համար ներդրվել են բնակչությանը

համապարած պատվաստելու միջոցառումներ, բժշկական հաստատություններին անվճար հիմունքներով հատկացվել են պատվաստանյութեր և այլն: Այդ թվում՝ նշված միջոցառումների արդյունավետ իրականացման նպատակով ՀՀ առողջապահության նախարարի՝ 2021 թվականի օգոստոսի 20-ի թիվ 65-Ն հրամանով սահմանվել է, որ աշխատողը յուրաքանչյուր 14 օրը մեկ պարտավոր է ներկայացնել կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտորոշման պոլիմերազային շղթայական ռեակցիայի հետազոտության բացասական թեստի արդյունք կամ համավարակի դեմ պատվաստումը հավաստող սերտիֆիկատը (տեղեկանք):

Քերոբ Քյարամյանը, ով նույն ժամանակահատվածում աշխատել է «Ռեդի-Սթեդի» ՍՊ ընկերությունում, պատվաստման դեպքում որոշակի առողջական խնդիրներ առաջանալու մտավախություն ունենալով, չի ցանկացել կորոնավիրուսային հիվանդության դեմ փաստացի պատվաստվել և ՀՀ առողջապահության նախարարի՝ հիշյալ հրամանով սահմանված՝ կորոնավիրուսային հիվանդության դեմ պատվաստումը հավաստող սերտիֆիկատը գործատուին ներկայացնելու և այդպիսով՝ պարբերաբար պոլիմերազային շղթայական ռեակցիայի (ՊՇՌ) հետազոտության վճարովի թեստ չհանձնելու նպատակով, իր նախկին համագյուղացու՝ Հրանտ Գևորգյանի հետ ունեցած մտերիմ հարաբերություններից ելնելով՝ 2021 թվականի սեպտեմբերի 30-ին դիմել է վերջինիս՝ խնդրելով միջնորդել իր և որդիների՝ Արթուր և Արմեն Քյարամյանների համար, առանց կորոնավիրուսային հիվանդության դեմ փաստացի պատվաստման, գումարի դիմաց ստանալ պատվաստված լինելը հավաստող կեղծ սերտիֆիկատներ:

Հրանտ Գևորգյանը, ընդառաջելով Քերոբ Քյարամյանի խնդրանքին, տեղյակ լինելով վերջինիս կողմից կաշառքի դիմաց առանց փաստացի պատվաստման պատվաստված լինելը հավաստող կեղծ սերտիֆիկատ (տեղեկանք) ձեռք բերելու մտադրության մասին, նպատակ ունենալով իր գործողություններով միջնորդել վերջինիս կողմից կաշառք տալուն, խոստացել է դիմել իր հետ մտերիմ փոխհարաբերությունների մեջ գտնվող՝ Հայաստանի Հանրապետությունում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող «Ալաշկերտի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի տնօրեն Լուսիկ Մնացականյանին և պայմանավորվածություն ձեռք բերել կաշառքի դիմաց առանց փաստացի պատվաստման պատվաստված լինելը

հավաստող կեղծ սերտիֆիկատ (տեղեկանք) ձեռք բերելու շուրջ, ապա՝ նպաստել է կաշառք տալու շուրջ կայացած համաձայնության իրականացմանը:

Այնուհետև՝ 2021 թվականի սեպտեմբերի 30-ին, Հրանտ Գևորգյանը հանդիպել է Լուսիկ Մնացականյանին և վերջինիս հետ ձեռք բերել կեղծ սերտիֆիկատներից յուրաքանչյուրի համար 30,000-ական ՀՀ դրամ, ընդհանուր՝ 90,000 ՀՀ դրամ, կաշառք տալու և ստանալու վերաբերյալ պայմանավորվածություն և ստանալով Լուսիկ Մնացականյանի համաձայնությունը՝ նույն օրն այդ մասին հայտնել է Քերոբ Քյարամյանին: Միաժամանակ, պատվաստման փաստը հաստատող փաստաթղթերում համապատասխան գրառումներ կատարելու և փաստաթղթերին կցելու նպատակով Լուսիկ Մնացականյանը Հրանտ Գևորգյանից պահանջել է Քերոբ Քյարամյանի և նրա որդիների անձը հաստատող փաստաթղթերի պատճենները, իսկ Հրանտ Գևորգյանն այդ փաստաթղթերն, իր հերթին, պահանջել է Քերոբ Քյարամյանից:

Հրանտ Գևորգյանը Քերոբ Քյարամյանից ստացել և Լուսիկ Մնացականյանին է փոխանցել Քերոբ, Արմեն և Արթուր Քյարամյանների անձը հաստատող փաստաթղթերի պատճենները, միաժամանակ հայտնելով Քերոբ Քյարամյանի խուսման մասին առ այն, որ կաշառքի գումարը՝ ընդհանուր 90,000 ՀՀ դրամը, վերջինս կտրամադրի երկրորդ՝ ամբողջական պատվաստման վերաբերյալ տվյալները Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային առողջապահության միասնական տեղեկատվական «Արմեդ» համակարգ մուտքագրվելուց հետո, այդ կերպ՝ նյութապես շահագրգռելով Լուսիկ Մնացականյանին վերջինիս դրդել է կատարել նաև պաշտոնեական կեղծիք:

Կաշառք տալու առաջարկն ընդունելուց հետո, Լուսիկ Մնացականյանը, ՀՀ առողջապահության նախարարի՝ 2020թ. օգոստոսի 17-ի թիվ 21-Ն հրամանի 19-րդ կետի համաձայն՝ պատասխանատու լինելով կանխարգելիչ պատվաստումների պատշաճ իրականացման համար, Քերոբ Քյարամյանի և Հրանտ Գևորգյանի դրդմամբ իր լիազորությունների շրջանակում, առանց Քերոբ Քյարամյանի, Արթուր Քյարամյանի և Արմեն Քյարամյանի փաստացի պատվաստման, վերջիններիս անձնական տվյալները գրանցել է իր կողմից բացված ամբուլատոր քարտերում, ինչպես նաև նույն ՀՈԱԿ-ի աշխատակից Օվսաննա Կարապետյանին կարգադրել է ամբուլատոր քարտերում և

պատվաստումների գրանցամատյանում մտցնել իրականությանը չհամապատասխանող ակնհայտ կեղծ տեղեկություններ իբր նշված անձինք ջերմաչափվել և 2021 թվականի հոկտեմբերի 5-ին ստացել են «Աստրա Զենեկա» պատվաստանյութի առաջին 0.5 միլիգրամ դեղաչափը:

Դրանից հետո, Քերոբ, Արթուր և Արմեն Քյարամյանների անվամբ պատվաստված լինելու վերաբերյալ կեղծ տվյալները ՀՈԱԿ-ի օպերատոր Լուսինե Մովսիսյանի կողմից մուտքագրվել են Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային առողջապահության միասնական տեղեկատվական «Արմեդ» համակարգ, ինչի արդյունքում անձնական տվյալներով ինքնաշխատ եղանակով կազմվել է պատվաստված լինելը հավաստող, բովանդակությամբ իրականությանը չհամապատասխանող, իրավունք վերապահող կեղծ փաստաթղթեր՝ սերտիֆիկատներ:

2021 թվականի հոկտեմբերի 6-ին Հրանտ Գևորգյանը ՀՈԱԿ-ի օպերատոր Լուսինե Մովսիսյանից ստացել և նույն օրը հեռախոսային հավելվածի միջոցով Քերոբ Քյարամյանին է փոխանցել վերը նշված կեղծ սերտիֆիկատները:

Այնուհետև, Քերոբ Քյարամյանն իր աշխատանքի վայրում՝ «Ռեդի-Սթեդի» ՍՊ ընկերության՝ Երևան քաղաքի Արին-Բերդ փողոցի 5-րդ նրբանցքի թիվ 11 հասցեում գտնվող պահեստում տեղեկանալով, որ իր գործընկերը՝ Գուրգեն Անանյանը, չի ցանկանում պատվաստվել և մտադրություն ունի գործատուին ներկայացնելու համար ձեռք բերել առանց պատվաստման պատվաստումը հավաստող սերտիֆիկատ, այդ հարցում վերջինիս օգնելու նպատակով հայտնել է, որ կարող է առանց պատվաստման սերտիֆիկատ ձեռք բերել, որից հետո խնդրել է իրեն տրամադրել նույնականացման քարտի պատճենը:

Գուրգեն Անանյանի նույնականացման քարտը լուսանկարելուց հետո Քերոբ Քյարամյանը 2021 թվականի հոկտեմբերի 7-ին զանգահարել է իր մտերիմ Հրանտ Գևորգյանին և խնդրել իր կողմից ներկայացրած անձի՝ Գուրգեն Անանյանի համար, առանց կորոնավիրուսային հիվանդության դեմ փաստացի պատվաստման, գումարի դիմաց ստանալ պատվաստված լինելը հավաստող կեղծ սերտիֆիկատ:

Հրանտ Գևորգյանը, կրկին ընդառաջելով Քերոբ Քյարամյանի խնդրանքին, տեղյակ լինելով վերջինիս կողմից կաշառքի դիմաց առանց փաստացի պատվաստման

Գուրգեն Անանյանի անվամբ պատվաստված լինելը հավաստող կեղծ սերտիֆիկատ (տեղեկանք) ձեռք բերելու մտադրության մասին, նպատակ ունենալով իր գործողություններով միջնորդել Քերոբ Քյարամյանի կողմից կաշառք տալուն, խոստացել է դիմել ՀՈԱԿ-ի տնօրեն Լուսիկ Մնացականյանին և պայմանավորվածություն ձեռք բերել կաշառքի դիմաց առանց փաստացի պատվաստման պատվաստված լինելը հավաստող կեղծ սերտիֆիկատ (տեղեկանք) ձեռք բերելու շուրջ, ապա՝ նպաստել է կաշառք տալու շուրջ կայացած համաձայնության իրականացմանը:

Այնուհետև, Հրանտ Գևորգյանը Լուսիկ Մնացականյանի հետ ձեռք բերելով կեղծ սերտիֆիկատի համար 30,000 ՀՀ դրամ կաշառք տալու և ստանալու վերաբերյալ պայմանավորվածություն և ստանալով Լուսիկ Մնացականյանի համաձայնությունը՝ նույն օրն այդ մասին հայտնել է Քերոբ Քյարամյանին: Միաժամանակ, պատվաստման փաստը հաստատող փաստաթղթերում համապատասխան գրառումներ կատարելու և փաստաթղթերին կցելու նպատակով Լուսիկ Մնացականյանը Հրանտ Գևորգյանից պահանջել է Գուրգեն Անանյանի անձը հաստատող փաստաթղթերի պատճենները, իսկ Հրանտ Գևորգյանն այդ փաստաթղթերն իր հերթին պահանջել է Քերոբ Քյարամյանից:

Հրանտ Գևորգյանը Քերոբ Քյարամյանից ստացել և 2021 թվականի հոկտեմբերի 12-ին Լուսիկ Մնացականյանին է փոխանցել Գուրգեն Անանյանի անձը հաստատող փաստաթղթերի լուսապատճենները: Միաժամանակ, 2021 թվականի հոկտեմբերի կեսին Հրանտ Գևորգյանն իր բնակության վայրում Քերոբ Քյարամյանից ստացել և Լուսիկ Մնացականյանին է տվել 30,000 ՀՀ դրամ կաշառքի գումարը, այդ կերպ՝ նյութապես շահագրգռելով Լուսիկ Մնացականյանին վերջինիս դրդել է կատարել նաև պաշտոնեական կեղծիք:

Ստացված կաշառքի դիմաց, Լուսիկ Մնացականյանը, ՀՀ առողջապահության նախարարի 2020թ. օգոստոսի 17-ի թիվ 21-Ն հրամանի 19-րդ կետի համաձայն՝ պատասխանատու լինելով կանխարգելիչ պատվաստումների պատշաճ իրականացման համար, Քերոբ Քյարամյանի և Հրանտ Գևորգյանի դրդմամբ իր լիազորությունների շրջանակում, առանց Գուրգեն Անանյանի փաստացի պատվաստման, վերջինիս անձնական տվյալները գրանցել է իր կողմից բացված

ամբուլատոր քարտում, ինչպես նաև Օվսաննա Կարապետյանին կարգադրել է ամբուլատոր քարտում և պատվաստումների գրանցամատյանում մտցնել իրականությանը չհամապատասխանող ակնհայտ կեղծ տեղեկություններ իբր Գուրգեն Անանյանը ջերմաչափվել և 2021 թվականի հոկտեմբերի 12-ին ստացել է «Աստրա Զենեկա» պատվաստանյութի առաջին 0.5 միլիգրամ դեղաչափը:

Դրանից հետո, Գուրգեն Անանյանի՝ պատվաստված լինելու վերաբերյալ կեղծ տվյալները ՀՈԱԿ-ի օպերատոր Լուսինե Մովսիսյանի կողմից մուտքագրվել են Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային առողջապահության միասնական տեղեկատվական «Արմեդ» համակարգ, ինչի արդյունքում անձնական տվյալներով ինքնաշխատ եղանակով կազմվել է պատվաստված լինելը հավաստող, բովանդակությամբ իրականությանը չհամապատասխանող, իրավունք վերապահող կեղծ փաստաթուղթ՝ սերտիֆիկատ:

2021 թվականի հոկտեմբերի 14-ին Հրանտ Գևորգյանը ՀՈԱԿ-ի օպերատոր Լուսինե Մովսիսյանից ստացել և նույն օրը հեռախոսային հավելվածի միջոցով Քերոբ Քյարամյանին է փոխանցել վերը նշված կեղծ սերտիֆիկատը:

Այնուհետև՝ 2021 թվականի հոկտեմբերի կեսին, Քերոբ Քյարամյանն իր աշխատանքի վայրում՝ վերը նշված պահեստում, տեղեկանալով, որ իր գործընկերներ Դավիթ Մանուկյանը և Կարեն Այվազյանը չեն ցանկանում պատվաստվել և մտադրություն ունեն կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ պատվաստումը հավաստող սերտիֆիկատները գործատուին ներկայացնելով՝ պոլիմերազային շղթայական ռեակցիայի (ՊՇՌ) հետազոտության վճարովի թեստ պարբերաբար չհանձնել, այդ հարցում վերջիններիս օգնելու նպատակով հայտնել է, որ կարող է առանց պատվաստման սերտիֆիկատ ձեռք բերել, որից հետո խնդրել է իրեն տրամադրել անձը հաստատող փաստաթղթերի պատճենները:

Դավիթ Մանուկյանի և Կարեն Այվազյանի անձը հաստատող փաստաթղթերը լուսանկարելուց հետո Քերոբ Քյարամյանը, առանց վերջիններիս գիտության, 2021 թվականի հոկտեմբերի 17-ին զանգահարել է իր մտերիմ Հրանտ Գևորգյանին և խնդրել իր կողմից ներկայացրած անձանց՝ Դավիթ Մանուկյանի և Կարեն Այվազյանի համար, առանց կորոնավիրուսային հիվանդության դեմ փաստացի պատվաստման, գումարի դիմաց ստանալ պատվաստված լինելը հավաստող կեղծ սերտիֆիկատներ:

Միաժամանակ, Քերոբ Քյարամյանը Հրանտ Գևորգյանին խնդրել է կաշառքի գումարը տալ իր միջոցներից՝ խոստանալով հետագայում հատուցել:

Հրանտ Գևորգյանը, կրկին ընդառաջելով Քերոբ Քյարամյանի խնդրանքին, տեղյակ լինելով վերջինիս կողմից կաշառքի դիմաց առանց փաստաթղթի պատվաստման Դավիթ Մանուկյանի և Կարեն Այվազյանի անվամբ պատվաստված լինելը հավաստող կեղծ սերտիֆիկատներ ձեռք բերելու մտադրության մասին, նպատակ ունենալով հանդես գալ որպես միջնորդ, խոստացել է դիմել Լուսիկ Մնացականյանին և պայմանավորվածություն ձեռք բերել կաշառքի դիմաց առանց փաստաթղթի պատվաստման պատվաստված լինելը հավաստող կեղծ սերտիֆիկատներ (տեղեկանքներ) ձեռք բերելու շուրջ, ապա՝ նպաստել է կաշառք տալու շուրջ կայացած համաձայնության իրականացմանը:

Դրանից հետո, Հրանտ Գևորգյանը Լուսիկ Մնացականյանի հետ ձեռք բերելով կեղծ սերտիֆիկատների դիմաց կաշառք տալու և ստանալու վերաբերյալ պայմանավորվածություն և ստանալով Լուսիկ Մնացականյանի համաձայնությունը՝ այդ մասին անմիջապես հայտնել է Քերոբ Քյարամյանին: Միաժամանակ, պատվաստման փաստը հաստատող փաստաթղթերում համապատասխան գրառումներ կատարելու և փաստաթղթերին կցելու նպատակով Լուսիկ Մնացականյանը Հրանտ Գևորգյանից պահանջել է Դավիթ Մանուկյանի և Կարեն Այվազյանի անձը հաստատող փաստաթղթերի պատճենները և հեռախոսահամարները, իսկ Հրանտ Գևորգյանն այդ փաստաթղթերն ու տվյալներն իր հերթին պահանջել է Քերոբ Քյարամյանից:

Հրանտ Գևորգյանը Քերոբ Քյարամյանից ստացել և 2021 թվականի հոկտեմբերի 26-ին Լուսիկ Մնացականյանին է փոխանցել Դավիթ Մանուկյանի և Կարեն Այվազյանի անձը հաստատող փաստաթղթերի լուսապատճենները և նրանց հեռախոսահամարները:

Կաշառք տալու առաջարկն ընդունելուց հետո՝ 2021 թվականի նոյեմբերի 1-ին, Լուսիկ Մնացականյանը՝ կաշառք ստանալու, Հրանտ Գևորգյանը՝ կաշառքի միջնորդության, իսկ Քերոբ Քյարամյանը՝ կաշառք տալու կասկածանքով բերման են ենթարկվել ՀՀ ազգային անվտանգության ծառայության Արմավիրի մարզային վարչություն:

Բացի այդ, Արմավիրի մարզի Ալաշկերտ համայնքի բնակիչ Միրանուշ Կիրակոսյանը, 2021 թվականի հոկտեմբերին, տեղեկանալով, որ իր ընտանիքին պատկանող, Արմավիրի մարզի Ալաշկերտ համայնքում գտնվող «Ալաշկերտ» սուպերմարկետի հսկիչ-վաճառողուհի Նինա Արևշատյանը չի ցանկանում կորոնավիրուսային հիվանդության դեմ փաստացի պատվաստվել, փոխարենը՝ ՀՀ առողջապահության նախարարի 20.08.2021թ.-ի թիվ 65-Ն հրամանով սահմանված՝ կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ պատվաստումը հավաստող սերտիֆիկատը գործատուին ներկայացնելու և այդպիսով՝ պարբերաբար պոլիմերազային շղթայական ռեակցիայի (ՊՇՌ) հետազոտության վճարովի թեստ չհանձնելու նպատակով մտադրված է ստանալ պատվաստված լինելը հավաստող կեղծ սերտիֆիկատ, վերջինիս հայտնել է, որ այդ հարցով կարող է դիմել «Ալաշկերտի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի տնօրեն Լուսիկ Մնացականյանին:

Միաժամանակ, Միրանուշ Կիրակոսյանը, տեղյակ լինելով այն մասին, որ իր հարսի հայրը՝ Վարուժան Մխիթարյանը, նույնպես չի ցանկանում կորոնավիրուսային հիվանդության դեմ փաստացի պատվաստվել, նպատակադրվել է նրա համար պատվաստված լինելը հավաստող կեղծ սերտիֆիկատ ձեռք բերելու հարցով ևս դիմել Լուսիկ Մնացականյանին:

Այնուհետև, Միրանուշ Կիրակոսյանը, 2021 թվականի հոկտեմբերի 14-ին «Ալաշկերտի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ում՝ տնօրեն Լուսիկ Մնացականյանի աշխատասենյակում, հանդիպել է վերջինիս և հայտնել Նինա Արևշատյանի ու Վարուժան Մխիթարյանի՝ առանց փաստացի պատվաստման, պատվաստված լինելը հավաստող կեղծ սերտիֆիկատներ ձեռք բերելու ցանկության մասին, որից հետո Լուսիկ Մնացականյանը, հայտնելով կեղծ սերտիֆիկատներ տրամադրելու հնարավորության մասին, իր լիազորությունների շրջանակում ակնհայտ ապօրինի գործողություն կատարելու համար դրանցից յուրաքանչյուրի դիմաց Միրանուշ Կիրակոսյանի միջոցով պահանջել է 15,000-ական ՀՀ դրամ, ընդհանուր՝ 30,000 ՀՀ դրամ կաշառք:

Բացի այդ, Արմավիր քաղաքի բնակիչ, սույն քրեական վարույթով մեղադրյալ Սուրեն Թովմասյանը 2021 թվականի սեպտեմբերին դիմել է իր հետ մտերիմ հարաբերությունների մեջ գտնվող, «Ալաշկերտի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի

տնօրեն Լուսիկ Մնացականյանին՝ հայտնելով, որ որոշակի առողջական խնդիրների պատճառով չի ցանկանում կորոնավիրուսային հիվանդության դեմ փաստացի պատվաստվել, փոխարենը՝ ՀՀ առողջապահության նախարարի 20.08.2021թ.-ի թիվ 65-Ն հրամանով սահմանված՝ կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ պատվաստումը հավաստող սերտիֆիկատը գործատուին ներկայացնելու և այդպիսով՝ պարբերաբար պոլիմերազային շղթայական ռեակցիայի (ՊՇՌ) հետազոտության վճարովի թեստ չհանձնելու նպատակով մտադրված է ստանալ պատվաստված լինելը հավաստող կեղծ սերտիֆիկատ:

Լուսիկ Մնացականյանը, ՀՀ առողջապահության նախարարի 2020թ. օգոստոսի 17-ի թիվ 21-Ն հրամանի 19-րդ կետի համաձայն՝ պատասխանատու լինելով կանխարգելիչ պատվաստումների պատշաճ իրականացման համար, ընդառաջելով Սուրեն Թովմասյանի խնդրանքին, նրա դրդմամբ և անձնական այլ դրդումներից ելնելով, առանց վերջինիս փաստացի պատվաստման, 2021 թվականի սեպտեմբերի 27-ին նրա անձնական տվյալները գրանցել է իր կողմից բացված ամբուլատոր քարտում, ինչպես նաև Օվսաննա Կարապետյանին կարգադրել է ամբուլատոր քարտում և պատվաստումների գրանցամատյանում մտցնել իրականությանը չհամապատասխանող ակնհայտ կեղծ տեղեկություններ, թե, իբր, Սուրեն Թովմասյանը ջերմաչափվել և 2021 թվականի սեպտեմբերի 27-ին ստացել է «Աստրա Զենեկա» պատվաստանյութի առաջին 0.5 միլիգրամ դեղաչափը:

Դրանից հետո, Սուրեն Թովմասյանի՝ պատվաստված լինելու վերաբերյալ կեղծ տվյալները ՀՈԱԿ-ի օպերատոր Լուսինե Մովսիսյանի կողմից մուտքագրվել են Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային առողջապահության միասնական տեղեկատվական «Արմեդ» համակարգ, ինչի արդյունքում անձնական տվյալներով ինքնաշխատ եղանակով կազմվել է պատվաստված լինելը հավաստող, բովանդակությամբ իրականությանը չհամապատասխանող, իրավունք վերապահող կեղծ փաստաթուղթ՝ սերտիֆիկատ:

Նախաքննության ընթացքում քրեական հետապնդում չհարուցելու միջնորդություններ են ներկայացվել հսկող դատախազին, որոնք վերջինիս որոշումներով բավարարվել են և Արթուր Քյարամյանի, Արմեն Քյարամյանի ու Գուրգեն Անանյանի նկատմամբ քրեական հետապնդում չի հարուցվել արարքը կատարելու

պահին գործող՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 38-314-րդ հոդվածի 1-ին մասով և 38-312-րդ հոդվածի 1-ին մասով, Դավիթ Սամվելի Մանուկյանի և Կարեն Սամվելի Այվազյանի նկատմամբ՝ 38-34-314-րդ հոդվածի 1-ին մասով և 38-312-րդ հոդվածի 1-ին մասով, Լուսինե Մովսիսյանի նկատմամբ՝ 38-314-րդ հոդվածի 1-ին մասով, Վարուժան Միսիթարյանի նկատմամբ՝ 38-314-րդ հոդվածի 1-ին մասով և 312-րդ հոդվածի 1-ին մասով, նրանց կողմից իրենց մեղսագրվող արարքները չկատարելու հիմքով:

Բացի այդ, նախաքննության ընթացքում՝ 2022 թվականի հունիսի 30-ին, որոշումներ են կայացվել Նինա Արևշատյանի նկատմամբ արարքը կատարելու պահին գործող՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածի 1-ին մասով, Սիրանուշ Կիրակոսյանի նկատմամբ 313-րդ հոդվածի 1-ին մասով՝ գործուն զղջալու հիմքով, նրանց նկատմամբ 38-34-314-րդ հոդվածի 1-ին մասով՝ հանցակազմի բացակայության հիմքով, քրեական հետապնդում չիրականացնելու մասին: (...)»[1]:

7. Առաջին ատյանի դատարանի՝ 2024 թվականի մարտի 18-ի որոշման համաձայն՝ *«(...) Իրավական նորմերի և Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման լույսի ներքո Դատարանն արձանագրում է, որ մեղադրյալ Քերոբ Քյարամյանին ներկայացված մեղադրանքի բովանդակությունից հետևում է, որ նրան մեղսագրվող՝ ՀՀ քրեական նախկին օրենսգրքի 38-314-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված առաջին հանցանքն ավարտվել է՝ 2021 թվականի հոկտեմբերի 5-ին, իսկ երկրորդ հանցանքը՝ 2021 թվականի հոկտեմբերի 12-ին:*

Դատարանն արձանագրում է, որ մեղադրյալ Քերոբ Քյարամյանին վերագրվում է արարք, որը կատարվել է ՀՀ քրեական նախկին օրենսգրքի գործողության ժամանակ և համապատասխանում է ՀՀ քրեական նոր օրենսգրքի 46-445-րդ հոդվածի 1-ին մասին, որով, որպես պատիժ, նախատեսված է նաև ազատազրկումը՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Այլ խոսքով, Քերոբ Քյարամյանին վերագրվող՝ ՀՀ քրեական նախկին օրենսգրքի 38-314-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը համապատասխանում է ՀՀ

[1] Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթ 8-64:

քրեական նոր օրենսգրքի 46-445-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքին, որը հանդես է գալիս որպես պատիժը մեղմացնող օրենք (քանի որ, ի տարբերություն ՀՀ քրեական նախկին օրենսգրքի 314-րդ հոդվածի, որը դասվում է միջին ծանրության հանցանքների շարքին, ՀՀ քրեական նոր օրենսգրքի 445-րդ հոդվածը դասվում է ոչ մեծ ծանրության հանցանքների շարքին), հետևաբար ունի հետադարձ ուժ: (...) Դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական նոր օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը դասվում է ոչ մեծ ծանրության հանցանքների շարքին, որի համար քրեական պատասխանատվությունից ազատելու վաղեմության ժամկետը՝ նույն օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն 5 տարի է, ինչը մեղադրյալի համար առավել խիստ և անբարենպաստ կարգավորում է՝ ի տարբերություն ՀՀ քրեական նախկին օրենսգրքով սահմանված՝ ոչ մեծ ծանրության հանցանքների համար քրեական պատասխանատվությունից ազատելու վաղեմության ժամկետի, որը հիշյալ օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ 2 տարի է:

Այսինքն, ՀՀ քրեական նոր օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասը՝ պատժի մեղմացման առումով հանդիսանում է պատասխանատվությունը մասնակիորեն մեղմացնող, միաժամանակ այդ արարքի համար քրեական պատասխանատվությունից ազատելու վաղեմության ժամկետի առումով՝ նույն օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված կարգավորումների համատեքստում պատասխանատվությունը մասնակիորեն խստացնող օրենք, հետևաբար՝ ՀՀ քրեական նոր օրենսգրքի 9-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված՝ «սույն հոդվածով նախատեսված չափանիշներին համապատասխան» (այսինքն՝ մեղմացնող մասով կիրառելով այդ հոդվածի 2-րդ մասով, իսկ խստացնող մասով այդ հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգավորումները) պայմանի կիրառմամբ ՀՀ քրեական նոր օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասը հետադարձ ուժ ունի միայն այն մասով, որով մեղմացնում է պատասխանատվությունը:

Անդրադառնալով Քերոբ Քյարամյանի կողմից քննությունից կամ դատից խուսափելու հանգամանքին՝ Դատարանն արձանագրում է, որ քրեական գործի նյութերում բացակայում է որևէ փաստական տվյալ առ այն, որ մեղադրյալ Քերոբ Քյարամյանը՝ իրեն մեղսագրվող՝ ՀՀ քրեական նախկին օրենսգրքի 38-314-րդ հոդվածի

1-ին մասով նախատեսված վերջին արարքի կատարումից հետո կատարել է նոր հանցանք կամ խուսափել է քննությունից կամ դատից:

Վերոգրյալի հաշվառմամբ Դատարանն արձանագրում է, որ մեղսագրվող արարքի համար Քերոբ Քյարամյանին քրեական պատասխանատվությունից ազատելու վաղեմության ժամկետը պետք է հաշվել 2021 թվականի հոկտեմբերի 13-ից, հետևաբար, նկատի ունենալով, որ միասնական էլեկտրոնային տեղեկատվական համակարգի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ վաղեմության ժամկետի ընթացքը չի ընդհատվել կամ կասեցվել, և Քերոբ Քյարամյանի կողմից մեղսագրվող՝ ՀՀ քրեական նախկին օրենսգրքի 38-314-րդ հոդվածի 1-ին մասով (համապատասխանում է՝ ՀՀ քրեական նոր օրենսգրքի 46-445-րդ հոդվածի 1-ին մասին) նախատեսված վերջին արարքը՝ ենթադրաբար կատարելուց հետո անցել է 2 (երկու) տարուց ավել ժամանակ, այսինքն՝ անցել է քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը, իսկ մեղադրյալն առարկություն չի ներկայացրել՝ իր նկատմամբ նշված հոդվածով իրականացվող քրեական հետապնդումն այդ հիմքով դադարեցնելու կապակցությամբ, ուստի Քերոբ Քյարամյանի նկատմամբ՝ ՀՀ քրեական նախկին օրենսգրքի 38-314-րդ հոդվածի 1-ին մասով (համապատասխանում է՝ ՀՀ քրեական նոր օրենսգրքի 46-445-րդ հոդվածի 1-ին մասին) իրականացվող քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման:

Դատարանը հարկ է համարում արձանագրել նաև, որ սույն որոշմամբ արված դատողություններն ու վերլուծությունները, իրենց համակցության մեջ ամբողջությամբ ներառում են հանրային մեղադրողի փաստարկների կապակցությամբ Դատարանի մոտեցումներն ու բարձրացված հարցերի պատասխանները: (...)»[2]:

8. Վերաքննիչ դատարանի՝ 2024 թվականի ապրիլի 18-ի որոշման համաձայն՝ *«(...) 2003 և 2021 թվականներին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքերի համապատասխանաբար 75-րդ և 83-րդ հոդվածների համեմատաիրավական վերլուծությունը վկայում է, որ 2021 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգիրքը քրեական պատասխանատվությունից ազատելու վաղեմության ժամկետների մասով տվյալ դեպքում անձի վիճակը վատթարացող օրենք է և կիրառելի չէ մեղադրյալ*

[2] Տե՛ս նյութեր, հատոր 1-ին, թերթեր 75-93:

Ք.Քյարամյանի նկատմամբ, քանի որ նախ սահմանում է վաղեմության ավելի երկար ժամկետներ, բացի այդ, վաղեմության ժամկետը, ի տարբերություն 2003 թվականին ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի, հաշվարկվում է մինչև անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին որոշում կայացնելը: Այսպես.

Քերոբ Քյարամյանին վերագրվում են երկու դրվագ արարքներ, որոնք կատարվել են 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի գործողության ժամանակ և վերջինիս այդ մասով վերագրվող արարքները համապատասխանում են 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասին, որով նախատեսված պատժատեսակ է նաև ազատազրկումը՝ առավելագույնը երկու տարի ժամկետով: Այսինքն, Քերոբ Քյարամյանին ՀՀ քրեական օրենսգրքի 46-445-րդ հոդվածի 1-ին մասով վերագրվող արարքները (2 դրվագ) դասվում են ոչ մեծ ծանրության հանցանքների շարքին:

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ քննության առարկա դեպքի նկատմամբ կիրառելի է ՀՀ քրեական օրենսգրքի 9-րդ հոդվածի 6-րդ մասը՝ հետևյալ հիմնավորմամբ.

2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը համապատասխանում է 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքին, որը հանդես է գալիս որպես պատիժը մեղմացնող օրենք և ունի հետադարձ ուժ:

Միաժամանակ, 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը դասվում է ոչ մեծ ծանրության հանցանքների շարքին, որի համար քրեական պատասխանատվությունից ազատելու վաղեմության ժամկետը նույն օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն ***5 տարի է,*** *ինչը մեղադրյալի համար առավել խիստ և անբարենպաստ կարգավորում է, քան 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի՝ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքին համապատասխանեցման արդյունքում այդ հոդվածի ծանրությանը համարժեք՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի ոչ մեծ*

ծանրության հանցանքների համար քրեական պատասխանատվությունից ազատելու վաղեմության ժամկետը, որը համաձայն այդ օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ ***2 տարի է:***

Այսինքն, 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասը՝ պատիժը մեղմացնելու առումով հանդիսանում է պատասխանատվությունը մասնակիորեն մեղմացնող, միաժամանակ այդ արարքի համար քրեական պատասխանատվությունից ազատելու վաղեմության ժամկետի առումով՝ նույն օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հետ փոխկապակցվածությամբ, պատասխանատվությունը մասնակիորեն խստացնող օրենք, հետևաբար, 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 9-րդ հոդվածի 6-րդ մասով ձևակերպված՝ «սույն հոդվածով նախատեսված չափանիշներին համապատասխան» (այսինքն, մեղմացնող մասով կիրառելով այդ հոդվածի 2-րդ մասով, իսկ խստացնող մասով այդ հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգավորումները) պայմանի կիրառմամբ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասը հետադարձ ուժ ունի միայն այն մասով, որով մեղմացնում է պատասխանատվությունը:

Ընդ որում, Վերաքննիչ դատարանը վերոնշյալ դատողություններին հանգելիս հաշվի է առնում նաև Վճռաբեկ դատարանի 2023 թվականի նոյեմբերի 10-ի՝ Միշա Մուրադյանի վերաբերյալ թիվ ԵԴ/1424/01/21 որոշման տրամաբանությունն առ այն, որ պատժի ինստիտուտը հանդիսանում է ավելի մեծ ինստիտուտի, այն է՝ քրեական պատասխանատվության, բաղադրատարր:

Այսպիսով, նկատի ունենալով այն հանգամանքը, որ մեղադրյալ Քերոբ Քյարամյանին վերագրված արարքները համապատասխանում են 2021 թվականին մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասին, որը դասվում է ոչ մեծ ծանրության հանցագործությունների շարքին և որի համար քրեական պատասխանատվությունից ազատելու վաղեմության ժամկետը 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն 2 տարի է՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Դատարանը, Քերոբ Քյարամյանին վերագրված արարքների համար քրեական պատասխանատվությունից ազատելու վաղեմության ժամկետի հաշվարկման մասով առաջնորդվելով ենթադրյալ

հանցավոր արարքները կատարելու պահին գործող՝ 2003 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի դրույթներով, գործել է իրավաչափ: (…)»[3]:

<u>Վճռաբեկ դատարանի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

9. Սույն վարույթով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչա՞փ են արդյոք մեղադրյալ Ք.Քյարամյանի նկատմամբ հարուցված հանրային քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

10. ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածի համաձայն՝ «*Ոչ ոք չի կարող դատապարտվել այնպիսի գործողության կամ անգործության համար, որը կատարման պահին հանցագործություն չի հանդիսացել: Չի կարող նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը ենթակա էր կիրառման հանցանք կատարելու պահին: Արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքն ունի հետադարձ ուժ»:*

ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն:*

2. Անձի իրավական վիճակը բարելավող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով»:

ՀՀ գործող քրեական օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Արարքի հանցավորությունը սահմանող, պատիժը խստացնող կամ հանցանք կամ քրեական օրենսդրությամբ նախատեսված արարք կատարած անձի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենսդրությունը հետադարձ ուժ չունի:*

2. Արարքի հանցավորությունը լրիվ կամ մասնակիորեն վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենսդրությունն ունի հետադարձ ուժ: Նշված դեպքում այն տարածվում է մինչև դրա ուժի մեջ մտնելը հանցանք կամ քրեական օրենսդրությամբ նախատեսված արարք կատարած այն անձանց վրա, որոնց վերաբերյալ դեռևս առկա չէ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատավարական ակտ:

---

[3] Տե՛ս նյութեր, հատոր 2-րդ, թերթեր 38-54:

(…)

4. Հանցանք կամ քրեական օրենսդրությամբ նախատեսված արարք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենսդրությունն ունի հետադարձ ուժ, եթե դա նախատեսված է օրենքով:

(…)

6. Պատասխանատվությունը մասնակիորեն մեղմացնող և միաժամանակ մասնակիորեն խստացնող օրենքը սույն հոդվածով նախատեսված չափանիշներին համապատասխան հետադարձ ուժ ունի միայն այն մասով, որը մեղմացնում է պատասխանատվությունը»:

11. ՀՀ Սահմանադրության 72-րդ և 73-րդ հոդվածներով ամրագրված երաշխիքները, որոնք նորմատիվ իրավական ակտի կիրառման սահմանադրական սկզբունք են, քրեաիրավական համակարգում առանցքային տեղ են գրավում, ինչը հատկապես ընդգծվում է այն հանգամանքով, որ փոփոխվող և զարգացող հասարակությունում կոնկրետ արարքի դեմ քրեաիրավական ներգործության նպատակահարմարությունը, դրա հանրային վտանգավորությունը կամ քրեականացված արարքը կատարած անձի իրավական վիճակը նորովի կարգավորվելու դեպքում, դատարանը, որպես քրեական դատավարությունում արդարադատության գործառույթով օժտված մարմին, պետք է քննարկման առարկա դարձնի օրենսդրական փոփոխության իրավական բնույթը, ըստ այդմ էլ՝ մինչ ընդունումը ծագած իրավահարաբերությունների վրա այն հետադարձությամբ տարածելու իրավական հնարավորությունը:

Հարկ է արձանագրել, որ ՀՀ Սահմանադրությամբ՝ ժամանակի մեջ իրավական ակտերի գործողության կանոնակարգումը հիմնվում է այն տրամաբանության վրա, որ իրավական ակտերի հետադարձ ուժով գործողության մերժումն ընդհանուր կանոն է, իսկ այդ ակտերի հետադարձ ուժով գործողության հնարավորությունը՝ բացառություն ընդհանուր կանոնից[4]:

Ընդ որում, բացառություններն իրենց հերթին տարբեր են. ա) երբ սահմանադիրը բացառում է որևէ հայեցողություն դրսևորելու հնարավորությունը՝

[4] Տե՛ս, *mutatis mutandis*, ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2011 թվականի նոյեմբերի 29-ի թիվ ՍԴՈ-1000 որոշումը:

սահմանելով հետադարձության ուղիղ պահանջ, օրինակ, արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքն օժտված է անմիջական գործողությամբ և բ) երբ անձի իրավական վիճակը բարելավող իրավական ակտին հետադարձ ուժ հաղորդելու լիազորությունը թողնվում է իրավասու՝ այդ ակտն ընդունող մարմնի հայեցողությանը, օրինակ, անձի իրավական վիճակը բարելավող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով[5]: Տարբերակման այս գաղափարն իր արտացոլումն է գտել նաև ՀՀ գործող քրեական օրենսգրքում. այսպես՝ օրենսգրքի 8-րդ և 9-րդ հոդվածների համադրված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ արարքի հանցավորությունը լրիվ կամ մասնակիորեն վերացնող կամ պատիժը մեղմացնող նորմի համար նախատեսվում է հետադարձ ազդեցության անմիջական պահանջ, մինչդեռ անձի վիճակն այլ կերպ բարելավող դրույթի հետադարձությունը պայմանավորվում է օրենքով նախատեսված լինելու հանգամանքով[6]:

12. Վճռաբեկ դատարանը, *Խաչատուր Պետրոսյանի և Հասմիկ Շանոյանի* վերաբերյալ գործով որոշմամբ անդրադառնալով քրեական օրենսդրության հետադարձությամբ կիրառման դեպքերին, արձանագրել է, որ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետի հաշվարկման տեսանկյունից քրեական նոր օրենքով անձին մեղսագրված հանցանքի տեսակի փոփոխությունն ինքնին չի կարող հետադարձ ներգործություն ունենալ, այսինքն, այս հարցի շրջանակներում օրենսդրական փոփոխությունների բարենպաստ լինելու ինքնուրույն ցուցիչ չէ, և տեղի ունեցած օրենսդրական փոփոխությունների բարենպաստ լինելու մասին կարելի է խոսել բացառապես քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտը կանոնակարգող՝ ՀՀ նախկին և գործող քրեական օրենսգրքերի ընդհանուր նորմերի հետ համադրված գնահատելու պարագայում: Միևնույն ժամանակ անդրադառնալով օրենսդրական փոփոխությունների արդյունքում հանցանքի տեսակի և վաղեմության ժամկետների

---

[5] Տե՛ս, *mutatis mutandis*, ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2021 թվականի մարտի 26-ի թիվ ՍԴՈ-1586 որոշումը:

[6] Տե՛ս, *mutatis mutandis,* Վճռաբեկ դատարանի՝ *Վանիկ Առուստամյանի* գործով 2024 թվականի փետրվարի 22-ի թիվ ԼԴ/0004/12/22 որոշումը:

փոփոխության իրավիճակներին, մասնավորապես՝ այն դեպքին, երբ արարքի (հանցանքի) ծանրության աստիճանը նվազում է, իսկ այդ արարքի համար սահմանված քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը չի փոփոխվում, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդրական փոփոխության արդյունքում պատժի մեղմացման հետևանքով նախկինում ծանր համարվող հանցանքը միջին ծանրության հանցանք հանդիսանալու դեպքում կիրառելի է մեղմացնող օրենքին հետադարձ ուժ տալու կանոնը՝ հանցանքի տեսակի և պատժի մասով, այսինքն՝ արարքը պետք է որակվի ՀՀ գործող քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածով: Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ անթույլատրելի է օրենքի փոփոխության արդյունքում հետադարձության կանոնների կիրառմամբ ստացված միջին ծանրության հանցանքի համար քրեական պատասխանատվությունից ազատելու վաղեմության ժամկետը (տասը տարին) համեմատել ՀՀ նախկին քրեական օրենսգրքով նախատեսված միջին ծանրության հանցանքի համար քրեական պատասխանատվությունից ազատելու վաղեմության ժամկետի (հինգ տարի) հետ: Նման համեմատությունը սկզբունքորեն չի համապատասխանի ժամանակի ընթացքում քրեական օրենքի գործողության կանոնի էությանն ու նշանակությանը: Հակառակ մոտեցումը հանգեցնում է այնպիսի իրավիճակի, որ արարքի կատարման պահին ծանր հանցագործություն համարվող արարքի պարագայում անձի նկատմամբ կիրառվում է արարքի կատարման պահին միջին ծանրության հանցանքի համար նախատեսված կարգավորումը, որը որևէ պարագայում կիրառելի չէ[7]:

13. Նախորդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումների լույսի ներքո, Վճռաբեկ դատարանը, *Լուսիկ Մանուկյանի* վերաբերյալ գործով որոշմամբ անդրադառնալով ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 38-314-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքն անձին մեղսագրված լինելու դեպքին, արձանագրել է, որ պաշտոնեական կեղծիք կատարելուն դրդելը, համաձայն ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի, դասվում էր միջին ծանրության հանցագործությունների շարքին, որոնց համար քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության

---

[7] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Խաչատուր Պետրոսյանի և Հասմիկ Շանոյանի* գործով 2024 թվականի մայիսի 31-ի թիվ ԵԱՔԴ/0196/01/17 որոշումը:

ժամկետը հինգ տարի էր: ՀՀ գործող քրեական օրենսգրքի 46-445-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցավոր արարքը դասվում է ոչ մեծ ծանրության հանցագործությունների շարքին: Միևնույն ժամանակ, օրենսդիրը ՀՀ գործող քրեական օրենսգրքի ընդհանուր մասում՝ վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով քրեական պատասխանատվությունից ազատելու կարգը սահմանող 83-րդ հոդվածում սահմանել է, որ ոչ մեծ ծանրության հանցանքի դեպքում անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտվելուն հաջորդող օրվանից անցել է հինգ տարի:

Ուստի ստացվում է, որ պաշտոնական կեղծիք կատարելուն դրդելը ՀՀ գործող քրեական օրենսգրքով թեև դասվել է ոչ մեծ ծանրության հանցագործությունների շարքին, սակայն քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետի տեսանկյունից երկու օրենսդրություններն էլ ցուցաբերում են նույն մոտեցումը, ըստ որի՝ վերոնշյալ հանցանքները կատարելու մեջ մեղադրվող անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե մեղսագրվող արարքների կատարման պահից անցել է հինգ տարի: Վերոգրյալից հետևում է, որ գործող քրեական օրենսդրությամբ հանցանքների տեսակի փոփոխությունը քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետների տեսանկյունից անձի համար որևէ բարենպաստ հետևանք չի առաջացնում, քանզի վաղեմության ժամկետի առումով քրեական օրենսդրության նախկին և ներկա կարգավորումները նույնական են: Այլ խոսքով՝ նշված հանցանքների տեսակի փոփոխության հետևանքով քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը նախկին օրենսգրքի համեմատ փոփոխությունների չի ենթարկվել, ուստի քննարկվող դեպքում, քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու հարցը ենթակա է լուծման տվյալ արարքների համար դրանց կատարման պահին գործող քրեական օրենսդրությամբ նախատեսված քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետի հաշվառմամբ[8]:

14. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ.

---

[8] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Լուսիկ Մանուկյանի* գործով 2024 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ ՀԿԴ/0094/01/23 որոշումը:

- նախաքննության մարմնի կողմից Ք.Քյարամյանին վերագրվել է երկու դրվագով պաշտոնեական կեղծիքի դրդչություն՝ դրանք որակելով ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 38-314-րդ հոդվածի 1-ին մասով[9],

- Առաջին ատյանի դատարանն արձանագրել է, որ մեղադրյալ Ք.Քյարամյանի կողմից հանցագործությունները կատարվել են ՀՀ նախկին քրեական օրենսգրքի գործողության պայմաններում և տվյալ օրենսգրքով ոչ մեծ ծանրության հանցագործության համար քրեական պատասխանատվությունից ազատելու վաղեմության ժամկետ է նախատեսվել 2 տարին, հետևաբար մեղադրյալ Ք.Քյարամյանին քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները հաշվելիս անհրաժեշտ է առաջնորդվել արարքի կատարման պահին գործող օրենքով ոչ մեծ ծանրության հանցագործությունների համար նախատեսված վաղեմության ժամկետների վերաբերյալ կարգավորումներով, քանի որ ՀՀ գործող քրեական օրենսգրքի 83–րդ հոդվածով նախատեսված ժամկետների կիրառումն էականորեն վատթարացնում է մեղադրյալի վիճակը[10],

- Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ 2003 և 2021 թվականներին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքերի՝ համապատասխանաբար 75-րդ և 83-րդ հոդվածների համեմատահիրավական վերլուծությունը վկայում է, որ ՀՀ գործող քրեական օրենսգիրքը քրեական պատասխանատվությունից ազատելու վաղեմության ժամկետների մասով տվյալ դեպքում անձի վիճակը վատթարացող օրենք է և կիրառելի չէ մեղադրյալ Ք.Քյարամյանի նկատմամբ, քանի որ սահմանում է քրեական պատասխանատվությունից ազատելու վաղեմության ավելի երկար ժամկետներ: Արդյունքում Վերաքննիչ դատարանը փաստել է, որ վաղեմության ժամկետն անցնելու առումով մեղադրյալ Ք.Քյարամյանի նկատմամբ կիրառելի են ՀՀ նախկին քրեական օրենսգրքի դրույթները, քանի որ դրանք առավել բարենպաստ են վերջինիս համար[11]:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 10-14-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և

---

[9] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:
[10] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:
[11] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեղադրյալ Ք.Քյարամյանին մեղսագրվող հանցանքները ՀՀ գործող քրեական օրենսգրքի համաձայն թեև դասվում են ոչ մեծ ծանրության հանցագործությունների շարքին, սակայն նույն օրենսգրքի՝ վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով քրեական պատասխանատվությունից ազատելուն վերաբերող իրավանորմերի համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ օրենսդրական դրույթների փոփոխությունները Ք.Քյարամյանի համար վաղեմության ժամկետների առումով բարենպաստ հետևանքներ չեն առաջացնում, քանզի երկու օրենսդրություններն էլ ցուցաբերում են նույն մոտեցումը: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով, ինչպես գործող քրեաիրավական օրենքով ոչ մեծ ծանրության, այնպես էլ՝ նախկին քրեական օրենսդրությամբ միջին ծանրության հանցագործությունների համար անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե մեղսագրվող արարքը կատարելու պահից անցել է հինգ տարի: Այլ կերպ՝ թե՛ նախկին, թե՛ գործող քրեական օրենսդրությունները թույլ են տալիս մեղադրյալ Ք.Քյարամյանին վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով ազատել քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտվելու օրվանից անցել է հինգ տարի:

Մինչդեռ, ստորադաս դատարանների մոտեցումը ոչ իրավաչափորեն հանգեցրել է նրան, որ վերագրվող ենթադրյալ արարքները կատարելուց շուրջ երկու տարի հինգ ամիս անց մեղադրյալ Ք.Քյարամյանը քրեական պատասխանատվության վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով ազատվել է քրեական պատասխանատվությունից, այն դեպքում, երբ, և՛ վերագրվող ենթադրյալ արարքների կատարման ժամանակ, և՛ գործող քրեական օրենքի համաձայն, վերջինիս քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը հինգ տարի է:

16. Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանների հետևությունն առ այն, որ մեղադրյալ Ք.Քյարամյանի նկատմամբ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու հարցը լուծելիս վաղեմության

ժամկետը ենթակա է հաշվարկման արարքի կատարման պահին գործող քրեական օրենքով ոչ մեծ ծանրության հանցագործությունների համար սահմանված վաղեմության ժամկետի հաշվարկման կանոնով, իրավաչափ չէ:

17. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարույթով Առաջին ատյանի դատարանը՝ դատական ակտ կայացնելիս, իսկ Վերաքննիչ դատարանը՝ Առաջին ատյանի դատարանի դատական ակտն անփոփոխ թողնելով, թույլ են տվել նյութական օրենքի ոչ ճիշտ կիրառում, այն է՝ կիրառել են ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, որը սույն վարույթով ենթակա չէր կիրառման, ինչը, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 362-րդ հոդվածի, հիմք է ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու համար: Միևնույն ժամանակ, հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պաշտպան Գ.Միքայելյանի միջնորդությունը պետք է մերժել:

Վերոգրյալի հաշվառմամբ, հիմք ընդունելով սույն որոշմամբ, ինչպես նաև *Ռեբեկա Գրիգորյանի*[12] գործով որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանը պետք է ըստ էության քննության առնի Ք.Քյարամյանի վերաբերյալ քրեական գործը և արդյունքում հանգի համապատասխան հետևության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ, 33-րդ, 34-րդ, 264-րդ, 281-րդ, 352-րդ, 359-րդ, 361-363-րդ ու 400-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Մեղադրյալ Քերոբ Քյարամյանի վերաբերյալ ՀՀ հակակոռուպցիոն դատարանի՝ 2024 թվականի մարտի 18-ի որոշումը և այն անփոփոխ թողնելու մասին

[12] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Ռեբեկա Գրիգորյանի* վերաբերյալ գործով 2024 թվականի օգոստոսի 27-ի թիվ ՀԿԴ/0094/01/23 որոշումը:

ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի՝ 2024 թվականի ապրիլի 18-ի որոշումը բեկանել և պաշտպան Գ.Միքայելյանի միջնորդությունը մերժել:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացնելու օրը:

Նախագահող՝ _____ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ա.ԿՐԿՅԱՇԱՐՅԱՆ

_____ Ռ.ՄԽԻԹԱՐՅԱՆ

_____ Ս.ՉԻՉՈՅԱՆ

_____ Դ.ՎԵՔԻԼՅԱՆ